

Նինո Պոպիաշվիլի
ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՒՄ
ԶՈՆՅՊՅՆՑՈ
(ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈՐՁԸ)

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Երկլեզու կրթությունը բոլորովին փոխում է մարդուն, ձևավորում է նրա հոգեբանությունը և կողմնորոշումները: Հայտնի է, որ երկլեզու/բազմալեզու կրթության ժամանակ անհատը ծանոթանում է ուրիշ լեզվից եկած մշակույթին և կիրառում է այն: Իսկ սա մարդու մեջ ստեղծում է նոր, լրացուցիչ նույնականություն:

Խորհրդային Միության գոյության պայմաններում երկլեզու կրթությունը ստեղծում էր խորհրդային նույնականություն: Ռուսաց լեզուն, որպես երկրորդ, իսկ որոշ դեպքերում՝ առաջին լեզու, այնքան նշանակալի և պարտադիր էր, որ Խորհրդային Միության մեջ մտնող որոշ երկրներում թե էթնիկական խմբերում մինչև օրս պահպանել է նախկին ազդեցությունը:

Ետխորհրդային շրջանում նկատվում էր նույնականության ճգնաժամ, որը երկլեզու կրթության հետ ևս անմիջական կապի մեջ էր:

Երկլեզու կրթության, որպես հասկացության և գործընթացի մասին բազմաթիվ տեսակետներ են առաջ քաշվել: «Երկլեզու կրթություն» հասկացությունը ոչ միանշանակ է, և այդ պատճառով էլ նրա մի քանի բացատրություն գոյություն ունի: Մի հասկացությամբ, երկլեզու կրթությունը ենթադրում է մայրենի լեզվից հիմնական՝ պետական լեզվին անցում: Որոշ հետազոտողներ ասում են, որ երկլեզու կրթությունը երկու լեզուների՝ մայրենիի և երկրորդ լեզվի (առավելապես

պետական լեզվի կամ տարածաշրջանային լեզվի) միաժամանակ և միատեսակ տիրապետում է, կամ միանման լիարժեքացում (Վարգես, 2004): Մեկ այլ տեսակետի համաձայն, երկլեզու կրթությունը հիմնախնդիր չէ ոչ պետության, ոչ էլ հասարակության համար, քանի որ սա որոշակի *ռեսուրս* է, որը պետք է օգտագործվի և ոչ թե *հիմնախնդիր*, որը պետք է վճռվի (Հորդնբերգեր, 2000): Այս մտտեցման համաձայն, երկլեզու կրթությունը

չպետք է վերածենք խոչընդոտի և չպետք է նախանշենք նրա վճռման ուղիներ, քանի որ հիմնախնդիրը հնարավոր է վճռվի կամ մնա չկարգավորված: Եթե երկլեզու կրթության մեջ նկատի ունենանք ռեսուրս, այդ դեպքում ինքը հիմնախնդիրը ևս կկորցնի նշանակությունը, իսկ ռեսուրսի գործարկումը կարելի է պլանավորել փուլերով և հանգամանքների համաձայն: Ռ-եսուրսի կիրառությունը մշտական և կայուն գործընթաց է, որը կարող է լինել լավ պլանավորված և հաշվարկված:

Երկլեզու կրթությունը հինգ գլխավոր բաղադրամաս պետք է բավարարի.

1. Երկմշակութայնություն, կամ բազմամշակութայնություն, որը ենթադրում է կարողություն, որ ամբողջությամբ լիարժեքորեն զգաս քեզ սեփական մշակույթի գրկում և, նաև դոմիանտ մշակույթի մեջ:
2. Բարձր արհեստավարժ երկլեզվություն, կամ երկու (կամ ավելի) լեզվի լիարժեք կերպով տիրապետում:
3. Երկու (կամ ավելի) մշակույթների հիմնարար ընդունում և մշակույթների միաձուլում:
4. Բարյացակամ վերաբերմունք այլ մշակույթների և լեզուներ կրողների նկատմամբ:
5. Էթնիկական փոքրամասնությունների համար հավասար կրթություն ստանալու հնարավորություն (Տրիլոս):

Թեպետ, պետք է ասել, որ այս բաղադրամասերը ևս կարելի է խմբավորել, քանի որ առաջին, երրորդ և չորրորդ կետերը բխում են միմյանցից և նույնիսկ լրացնում միմյանց: Համապատասխանաբար, կարող ենք ենթադրել, որ երկմշակութայնությունը և/կամ բազմամշակութայնությունն իրենց մեջ

պարունակում են երկու կամ ավելի մշակույթների իրենց դասում, մշակույթների միաձուլման, յուրացման գործընթաց, նաև բարյացակամություն այլ մշակույթի և/կամ լեզվի ներկայացուցիչների նկատմամբ:

Երկլեզու կրթությունը բոլորովին փոխում է մարդուն, ձևավորում է նրա հոգեբանությունը և կողմնորոշումները: Հայտնի է, որ երկլեզու/բազմալեզու կրթության ժամանակ անհատը ծանոթանում է և օգտագործում այլ լեզուներից ներմուծված մշակույթը: Իսկ սա մարդու մեջ ստեղծում է նոր, լրացուցիչ նույնականություն:

Ինքնանույնականացման չափանիշները՝ սեռ, ազգություն, մայրենի լեզու, ընտանիք, հետաքրքրություններ, ճանաչում է նաև լրացուցիչ բնութագրիչներ, որոնց համաձայն մարդ կարողանում է ինքնանույնականացվել: Երկրորդ լեզուն հաճախ նույնականության արտաքին բնութագրիչներից մեկն է, առավել ևս այն միջավայրում և այն դեպքում, եթե երկրորդ լեզվի կարգավիճակը զբաղեցնում է պետական լեզուն:

Երկրորդ լեզուն հաճախ հավասար է երկրորդ նույնականության, կամ դառնում է ինքնանույնականացման լրացնող:

Հայտնի է, որ եթե երկրորդ լեզուն աշխարհում տարածված լեզուներից մեկն է, հաղորդակցության ժամանակ այս լեզվով խոսելիս տեղի է ունենում ինչպես լեզվական բաղադրամասերի՝ բառապաշարի, շարահյուսության, ձևաբանության հաճախ կիրառություն, այնպես էլ հենց երկրորդ լեզվի ազդեցությամբ մշակութային և կենցաղային յուրահատկությունների, աշխարհագրական և պատմական բաղադրամասերի ընդգրկում:

Եթե երկրորդ լեզուն պետական լեզուն է, նրա նշանակությունն էլ ավելի է ընդլայնվում: Երկրորդ նույնականության կամ նույնականության բնութագրիչի դերն

ավելի է ընդգծվում և երկրորդ լեզվի կիրառության պատճառաբանվածությունն էլ ավելի է աճում:

Խորհրդային Միությունը, որը բազմազգ և բազմամշակույթ պետություն էր, իր մեջ ընդգրկում էր բազմաթիվ լեզուներ և մշակույթներ, որտեղ դոմինանտը ռուսական և/կամ խորհրդային մշակույթն էր: Խորհրդային Միության գոյության պայմաններում, երկրորդ լեզվի կարգավիճակը շնորհիվ էր ռուսերենին: Տասնյակ տարիների ընթացքում ռուսաց լեզվի և մշակույթի գաղափարական ազդեցության հետևանքով ձևավորվել էր խորհրդային մշակույթ, որն ամբողջությամբ ռուսալեզու էր: Ռուսերենը միաժամանակ անհրաժեշտ/պարտադիր և էլիտար լեզվի վերածվեց: Ռուսաց լեզվի բազմակողմանի և հարկադրական կարգավիճակը Խորհրդային Միությունում ապրող ժողովուրդների մեծ մասի վրա գաղափարական ազդեցություն ունեցավ և նույնականության՝ ռուսաց լեզվի և մշակույթի հետ ձևավորում առաջացրեց: Ինչպես նշում են, «Խորհրդային կրթական և լեզվական քաղաքականության հետևանքով Վրաստանում ապրող էթնիկական խմբերը՝ ռուսները, հայերը, ադրբեջանցիները, աբխազները, օսերը, հույները, քրդերը և այլոք դարձան ռուսական քաղաքական և լեզվական քաղաքականության մաս» (Տարատաձե):

Նշանակալի է ընդգծել այն, որ ռուսական նույնականության հետ առանձնահատուկ մերձություն էին հանդես բերում Խորհրդային Միության մեջ մտնող այն ժողովուրդները, որոնք հետագայում համարվում էին ազգային փոքրամասնություններ: Սեփական լեզվի և մշակույթի կողքին նրանք սովորում էին և ծանոթանում ոչ թե տարածաշրջանային լեզուն (Վրաստանի օրինակով, վրացերենը), այլ ռուսաց լեզուն: Իսկ

նույնականության նման ձևավորումը հետագայում ծագած հակամարտություններում գլխավոր դերերից մեկը կատարեց:

Հայտնի է, որ ինքնանույնականությունը նույնականությունների բազմերանգություններից է կազմված, որտեղ յուրաքանչյուր բաղադրամաս հնարավոր է լինի առաջատար: Էնտոնի Գ. Սմիթը նշում է. «Ես»-ը բազմաթիվ նույնականություններ և դերեր է ընդգրկում, լինի դա ընտանեկան, տարածքային, դասային, կրոնական, էթնիկական թե գենդերային: Այն նաև բացահայտում է, թե ինչպես է հիմնվում յուրաքանչյուր այս նույնականությունը այն սոցիալական դասակարգումների վրա, որոնք հնարավոր է փոխեն իրենց դեմքը կամ բոլորովին վերանան» (Սմիթ, 2006):

Խորհրդային Միության գոյության պայմաններում երկլեզվության հիմքի վրա ձեռք բերած նույնականությունը սահմանում էր Խորհրդային Միությունում ապրող ժողովուրդների զարգացումը: Ռուսաց լեզվի ազդեցությունը հաճախ նույնիսկ մայրենի լեզվից հզոր էր: Ձեռքբերովի, երկրորդային նույնականությունը դոմինանտ էր դառնում և առաջնային նույնականությունը՝ երկրորդային: Այս գործընթացն առանձնապես բնորոշ էր Խորհրդային Միության մեջ մտնող բազմաթիվ ժողովուրդներին, որոնց հնարավոր է բաժանել երեք կարգի:

1. Առաջին հերթին, սլավոնական լեզուների ժողովուրդների, օրինակ՝ ուկրաինացիների և բելոռուսների համար: Քանի որ ռուսերենը բոլոր հանրապետություններում և ողջ միությունում էլ պետական լեզու էր, հենց այս լեզվով էր ընթանում պաշտոնական և վարչական գործավարությունը: Այդ պատճառով էլ հազվադեպ էր անհրաժեշտություն լինում

վրացերեն գործավարության, առանձնապես, սլավոնական լեզուների խմբի մեջ մտնող ժողովուրդների համար: Այս գործոնը մինչև օրս հիմնախնդրի է վերածված: Հայտնի է, որ Բելոռուսում քսաներորդ դարի վերջում բելոռուսերենը հայտարարվեց պետական լեզու, սակայն մինչև օրս այնտեղ երկու պետական լեզու կա՝ ռուսերենը և բելոռուսերենը, և գործավարությունը ևս երկու լեզուներով է ընթանում: Միևնույն ժամանակ, ինչպես Բելոռուսում, այնպես էլ Ուկրաինայում միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասում ուսուցումն ընթանում է ռուսերեն: Միայն որոշ ֆակուլտետներ ունեն այսպես կոչված երկու մասնաճյուղ, որտեղ ռուսերենի հետ մեկտեղ ազգային լեզվով են դասավանդում (բելոռուսերեն, ուկրաիներեն):

2. Միջին Ասիայի երկրներում ազգային լեզվի հետ մեկտեղ պետական լեզու է կամ պետական լեզվի հետ հավասարեցված է ռուսերենը, քանի որ տարիներ շարունակ վարչական և պաշտոնական գործավարությունն ընթանում էր ռուսերեն և, այս փորձից ելնելով, Միջին Ասիայի հանրապետությունների համար վարչական գործավարության ռուսաց լեզվից ազգային լեզվի տեղափոխելը բարդ կամ նույնիսկ անհնար եղավ: Պետք է նշել նաև այն, որ, եթե նախորդ կետում որպես օրինակ վերցված բելոռուսերենի դեպքում բելոռուսերենը շատ մոտ է

ռուսերենին և լեզվական պատնեշ չկա, կամ այն պակաս է խոչընդոտում, ավելի բարդ վիճակ է՝ կապված Միջին Ասիայի երկրների ազգային լեզուների հետ:

3. Այն էթնիկական խմբերը, որոնք Խորհրդային Միությունում այլ հանրապետությունների կազմի մեջ էին գիտակցվում (օրինակ՝ օսերը, ադրդեյները, չեչենները, ինգուշները և այլն), ռուսերենին առանձնահատուկ ցանկությամբ և ձգտումով էին տիրապետում, քանի որ ռուսերենը նրանց համար այլ լրացուցիչ հենարան էր:

Մեփական մշակութային նույնականությունը նախկին Խորհրդային Միության երկրների մեջ մտնող ժողովուրդների համար բավականին ուշ, 20-րդ դարի 80-ական թվականների համար դարձավ հրատապ: Կարելի է ասել, որ Խորհրդային Միության մեջ մտնող ժողովուրդներին մշակութային և լեզվական նույնականության զգացումը և գիտակցումը հասցրին Խորհրդային Միության կազմալուծման:

Անպայման պետք է նկատի ունենալ այն, որ գլոբալ փոխակերպումների դարաշրջանում որոշակի փոխակերպում է կրում նաև նույնականությունը: Հետևաբար, եթե նկատի ունենանք խորհրդային փորձը, ետխորհրդային դարաշրջանում անկախություն ձեռք բերած ժողովուրդները հայտնվեցին նույնականության ճգնաժամի մեջ: Այս գործընթացը համարում են նաև ազգերի և ժողովուրդների ինքնորոշման դարաշրջան: Գոյություն ունի տեսակետ, որ հենց նույնականության ճգնաժամը դարձավ քաղաքական, էթնիկական թե կրոնական հակամարտությունների գլխավոր պատճառներից մեկը: Որոշ փորձագետների կարծիքով, այս հակամարտությունները

«լեզվական պատերազմներն» էին (Սվանիձե):

Երկլեզվությունը նույնականության փոխակերպման հիմնական բնութագրիչներից մեկն է և գլխավոր գործոնը:

Նշանակալի է նաև այն, որ երկլեզու միջավայրը կրթական քաղաքականության համար որոշող համատեքստերից մեկը պետք է լինի: Նշված է, որ լեզվական

կրթական քաղաքականության կազմակերպումը պետք է նախատեսի լեզվաբանական միջավայրը, անհատների և պետության ընթացիկ և ապագայի պահանջմունքները (թե որ լեզուներն են, ինչպիսի ծանրաբեռնում ունեն այս լեզուները) և լեզուների ուսուցման հայեցակարգերը (լեզվական կրթական քաղաքականության զարգացումը Եվրոպայում, 2008):

Նույնականության ճգնաժամից հետո ետխորհրդային երկրներում նույնականության փոխակերպման նոր ալիք սկսվեց, որը սերտորեն կապվեց երկլեզու կրթության հետ: «Չէ՞ որ երկլեզու կրթության նպատակը, մի կողմից՝ պետական լեզվի համապատասխան մակարդակով յուրացումն է, մյուս կողմից՝ փոքրամասնությունների լեզուների պահպանման և զարգացման մասին հոգ տանելը: Այսպիսի հայեցակարգային մոտեցումը փոքրամասնությունների ներկայացուցիչներին ազատում է լեզուն և նրա հետ, այսպես ասած, «կապված» լեզվական ինքնանույնականացումը կորցնելու վտանգի զգացումից և բարձրացնում է սովորողների և նրանց ծնողների շահագրգռվածությունը՝ սովորել պետական լեզուն՝ նրանց համար պարզ է դառնում, որ դպրոցական երկլեզու կրթությունը դեռահասին պատրաստելու գործիք է՝ նրա կարիերային առաջընթացի և սոցիալ-տնտեսական թե քաղաքական

բնագավառներում հաջողության հասնելու համար, միևնույն ժամանակ, երեխայի մշակութային միջավայրը ոչ թե ճնշվում է, այլ զարգանում և ավելի լավ է դրսևորվում՝ երկրորդ լեզվի միջավայրի հետ համեմատելու ֆոնի վրա» (Գաբունիա, 2010):

Պետական կամ քաղաքացիական գիտակցության լիարժեք իմաստավորումն անհնար է առանց պետական լեզվի տիրապետման: Պետական լեզվի, որպես երկրորդ լեզվի, լիարժեք տիրապետման դեպքում բարձրանում է ինչպես պետական գիտակցությունը, այնպես էլ տեղի է ունենում երկրորդ նույնականության ճանաչում կամ ինքնանույնականացման լրացուցիչ քաղաքամասով լրացում: Իսկ սա նպաստում է քաղաքացու լիարժեք ընդգրկմանը քաղաքացիական կյանքի մեջ:

Վրաստանը, որպես բազմազգ երկիր, անկախության ձեռքբերման հենց առաջին տարիներին հայտնվեց բազմալեզու և բազմազգ իրականության առջև: Երկլեզու կրթության տեսանկյունից քաղաքականության մշակմանը մի քանի փուլ անհրաժեշտ եղավ, թեպետ այսօրվա դրությամբ փորձագետները համարում են, որ «Վրաստանի օրենսդրությունը միանշանակորեն ընդգծում է պետական լեզվի նշանակությունը պետական վարչարարության բնագավառում, և միևնույն ժամանակ, ստեղծում երաշխիքներ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար, այդ թվում մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքը: Այսօրվա փուլում, հավանաբար, ամենից կարևորը այս օրենսդրական երկու ուղղությունների կատարման համար իրական մեխանիզմների ստեղծումն է: Երկու օրենսդրական ուղղությունների ի կատար ածումը և իրականացումը հնարավոր կլինի միայն էթնիկական փոքրամասնությունների

ճիշտ կրթական քաղաքականության շնորհիվ: Հենց երկլեզու կրթական քաղաքականությունն է կարևորագույն ելքերից մեկը, որպեսզի այս երկու օրենսդրական ուղղություններն ի կատար ավելեն իրականության մեջ» (Տաբատաձե):

Ելնելով ետխորհրդային իրականությունից՝ կարծում ենք, արդեն հաղթահարված է այն ճգնաժամը, որ բնորոշ էր ետխորհրդային երկրներին

քսաներորդ դարի վերջում՝ լեզվական քաղաքականության և երկլեզու կրթության տեսակետից: Կարելի է ասել, որ այսօրվա համար Վրաստանը, որպես ետխորհրդային և/կամ ետգաղութային երկիր, ավելի շատ հոգ է տանում երկլեզու/բազմալեզու կրթության ներդրման մասին, առանձնապես ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում:

Վերջերս Վրաստանում առաջացել է միտում, որ պետական լեզվի կողքին այսպես

կոչված երկրորդ լեզվի գործառույթ ձեռք բերի անգլերենը, ինչը հավասարաչափ պայմանավորել են պետական քաղաքականության ուղղության արևմտյան կողմնորոշումը, համաշխարհային լեզվական միտումները և վրացական նույնականության նոր փոխակերպումը: Վրաստանի իշխանության այս ուղղությունները տարբեր տեսակետից ի հայտ եկան, իրականացվել է և իրականացվում է մի քանի նախագիծ, ինչը նպաստում է անգլերենի ուսուցմանը և տարածմանը ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ տարածաշրջաններում: Պետական քաղաքականության այսպիսի կողմնորոշումը Վրաստանում ունի ինչպես կողմնակիցներ, այնպես էլ հակառակորդներ: Հակառակորդների մեծ մասը սրանում տեսնում է ռուսաց լեզվի ազդեցության նոր փոխարինումը, իսկ կողմնակիցները, հիմնականում, համաշխարհային միտումներն են նախատեսում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բարտ, 2003, Барт Р. Общество, воображение, реклама // Система моды: Статьи по семиотике культуры. - М.: 2003.
- Գաբունիա, 2010, Կախա Գաբունիա, Լեզվի և առարկայական բովանդակության ինտեգրված ուսուցման յուրահատկությունները երկլեզու դասարանում, Թբ., 2010, հանդես «Երկլեզու կրթություն» №1, 2010:
- Լեզվական կրթության քաղաքականության զարգացումը Եվրոպայում, 2008, Լեզվական բազմերանգությունից մինչև բազմալեզու կրթություն: Հիմնական տարբերակ Լեզվական քաղաքականության բաժին, Եվրոպայի խորհուրդ, 2008:
- Վարգես, 2004, Varghese, M. M. Professional Development for Bilingual Teachers in the United States: A Site for Articulating and Contesting Professional Roles. BILINGUAL EDUCATION AND BILINGUALISM, 2004, Vol. 7, No. 2&3, pp. 222-238.
- Թևազաձե, 1999, Գ.Թևազաձե, Վրաստան՝ իշխանության սինուլյացիաներ, Թբիլիսի, 1999.
- Թևազաձե, 2003, Գ.Թևազաձե, Վրաստան՝ իշխանության վերադարձնելը, Թբ., 2003.
- Սմիթ, 2006, Էնտոնի Գ. Սմիթ, Ազգային նույնականություն, Թբ., 2006

-
- Տարասուաձե, 2010, <<http://www.scribd.com/doc/16213298/Multilingual-Educational-Policy-by-Shalva-Tabatadze-Georgian-Version>>
- Սվանիձե, 2006, Svanidze, G. National minorities in Georgia, review. Retrieved on March 25, from the website: www.minelres.lv.archive.htm <<http://www.minelres.lv.archive.htm>>
- Հորնբերգեր, 2000, <<http://www.gse.upenn.edu/~hornberg/papers>> /Revisiting Continua 2000.pdf

Nino Popiashvili

**Bilingual Education in the Discourse of Identity
(Soviet and post-soviet experience)**

ABSTRACT

Bilingual education can completely alter a person, and build up an individual's psychology and attitudes. It's a well known fact that while receiving bilingual/multicultural education, a person gets to know and applies the culture of a foreign language. And this, in its turn, creates another new identity within a person.

During the Soviet era the bilingual education developed a soviet identity. The Russian language, having been used as a second and in certain cases as a first language, became so important and compulsory that in some former USSR states or ethnic groups it still remains as influential as ever.

The identity crisis was clearly evident during the post-soviet period. This severe crisis was directly related to the bilingual education.